ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ՀՀ ՆԳՆ ԲՄԱՊՁԲ-Ա-46/2026 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԵՐԻ

Ք.Երևան **«07» «07» 2026թ.**

ժամը 10:00

Նիստերին մասնակցում էին՝

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետի տեղակալ Ռաֆայել Մկրտչյան (հանձնաժողովի նախագահ),
բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության ռադիոկապի ապահովման բաժնի պետ Գուրգեն Գրիգորյան (գնահատող անդամ),
գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության ռադիոկապի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Մկրտչյան (գնահատող անդամ),
դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ասատուր Աբասյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

1. Օրակարգ

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **հատուկ նշանակության տեխնիկական միջոցների** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԲՄԱՊՁԲ-Ա-46/2026** ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին, «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ին և «Ալիկանտե» ՍՊԸ-ին տրվել էր 1 աշխատանքային օր արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով:**

2. Տվյալներ՝ շտկված հայտերի / փաստաթղթերի/ կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ի և «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից ժամանակին և հրավերի պահանջներին համապատասխան կատարվել են շտկումները:

3. Հանձնաժողովը որոշեց՝

3.1 ՀՀ ՆԳՆ ԲՄԱՊՁԲ-Ա-46/2026 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշեց **«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «ՄԻՌՌՈՌՍ» ՍՊԸ-ի և «Ալիկանտե» ՍՊԸ-ի** հայտերը գնահատել բավարար:

3.2 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի և «Ալիկանտե» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հավասար գնային առաջարկներ, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման կարգի 40-րդ կետի և ընթացակարգի հրավերի 8.6 կետով սահմանված պահանջները, հանձնաժողովը որոշեց՝ կասեցնել ընթացակարգի հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և հավասար գներ ներկայացրած մասնակիցներ՝ **«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին և «Ալիկանտե» ՍՊԸ-ին** միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

4. Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.

4.1 Հանձնաժողովի քարտուղարի կողմից համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով սույն նիստի օրը կկատարվի ծանուցում, նշելով՝ միաժամանակյա բանակցությունների

վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

4.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա 09.07.2026 թվականին, ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեում /ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժին, 404 սենյակ/, ժամը 11:00-ին և բանակցությունները կտևի 15 րոպե:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

ՆԱԽԱԳԱՀ՝

Ռաֆայել Մկրտչյան

ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Գուրգեն Գրիգորյան

Դավիթ Մկրտչյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ասատուր Աբասյան